№ 92 ՅՈՒՆԻՍԻ 8 (20) 1878 ՅՈՒՆԻՍԻ 8 (20) № 92

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Խորէն Նարբէյ։ Նամակ Երեւանից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Իտալիա։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷՅ ՀԱՅՈՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

—

Խորէն արքեպիսկոպոսը Ներսէսի հասակակից է։ Նա ծնվեցաւ Բերայում 1. Պօլսի եւրօպական թաղում, 1867 թուի փետրվարի 10-ին։ Նրա ծնողները համեստ տեղ էին բռնում աշխարհում։ Նա կրկին յայտնի է Խորխորունի անունով. դա մի կեղծ անուն է, որ նա գործ էր ածում իր հիանալի բանաստեղծութիւնների մէջ «Պօլսհիսօր» և «Մասիաց Աղաւնիի» մէջ, որոնք հայոց պարբերական հաւաքածուներ էին Վենետիկում և Փարիզում։ Նա մինչև եպիսկոպոս ձեռնադրվելը կրում էր նոյնպէս Դալքիայեան ազգանունը։ Calfa խօսքը, որ Թիւրքերին նշանակում է վարպետի օգնական կամ վարժապետի օգնական, ցոյց է տալի բանաստեղծ-արքեպիսկոպոսի համեստ ծագումը։ Նարբէյ (հրեղէն կոմ) աւելուածը ծագում է իր նախնիքից որը նշանաւոր եղաւ Ֆրանսիացիների Եգիպտոսից յետ քաշվելուց յետոյ Խեդիվի տոհմը վերականգնող Մեհէմեդ-Ալիի ծառայութեան մէջ։

Դալքիայ գնդապետը, Մեհէմեդ-Ալիի ամենապաւ խորհրդականներից մէկը, այս տիտղոսը ստացաւ, իր հաւատարմութեան և քաջութեան համար, որը նա երևացնում էր կրակի մէջ կուի դաշտի վրա։ Արևելքի փոխաբերական լեզուն միշտ գիտէ անձնաւորութիւններ նկարագրել։ Ցայտնի է որ արաբները Նապոլէոնին հրեղէն մարդ անուանեցին (ehlulnar)։

Ճշդութեան և անկողմնապահութեան համար ես պէտք է ասեմ, որ ազգանունի այս փոփոխութիւնը, հայոց Լամարտինի արքեպիսկոպոս Խորէնի հակառակորդները վերաբերում են նրա վատ ձգտումներին. մենք չենք կարող դատել այս կարծիքի ճշդութեան վերաբերութեամբ։

Երիտասարդ Դալքիայեանի ընտանիքը, հայոց ազգի կաթոլիկական բաժնին էր պատկանում, այս ընտանիքի երիտասարդութեան վրա ուշադրութիւն դարձրին Բերայի մխիթարեանները, ուր նրանք ունէին պատրաստական ուսումնարան, որտեղից երիտասարդ Դալքիայեանները Վենետիկ ուղարկվեցան, իրանց կրթութիւնը կատարելագործելու համար։ Երիտասարդ Խորէնի վաղաժամանակեայ զարգացումը և մանաւանդ նրա բանաստեղծական ձգտումները իրանց վրա դարձնել տուին Վենետիկի Ս. Ղազարոս վանքի միաբանութեան ամենամեծ ազդեցութիւն ունեցող վարդապետների՝ Հիւբմիւզեան եղբայրների ուշադրութիւնը։ Դրութիւնը և բոլոր շրջանը նպաստում էին երիտասարդ Խորէնի բանաստեղծական զգացմունքների զարգանալուն և այստեղ նա բոլորովին կարողացաւ իր գիտութիւնների ծարաւին կատարելապէս բաւականութիւն տալ։ 13 տարեկանից մինչև 18 տարեկան հասակը նա, երիտասարդ Խորէնի ուսուցիչների խօսքերով, իր առաջադիմութիւններով զերազանցեց բոլոր իր ընկերներին։ Քսան տարի առաջ կրթութիւնը և ուսումը շատ ծաղկած էր մխիթարեանների ուսումնարաններում, այնպէս որ մինչև անգամ իտալացիք հիանում էին նրանցով. և այս պատճառով Խորէնի ծնողները ուրախութեամբ համաձայնեցին իրանց զաւակներին ուղարկել Ս. Ղազարոսի վանքը։ Այնպիսի երևելի ուսուցիչների ազդեցութեան տակ որպիսին Այվազովսկին (այժմ արքեպիսկոպոս Թիֆլիսում) և Հիւբմիւզեան եղբայրներ են, Խորէնը վճռեց իրան հաւատի ծառայութեանը նուիրել, չը նայելով իր ծնողների ընդդիմադրութեանը, որոնք զրկվեցան իրանց որդկերանցից մէկից, Ամբրոսիոս վարդապետից, որը գնաց Փարիզ, ուր նա պարապում է գիտութիւններով։ Վերջապէս նրանք ստիպվեցան համաձայնել։ Վարդապետ ձեռնադրվելով, Խորէն Խորխորունին «Պօլսհիսօրիս» ամենալաւ աշխատակիցներից մէկն էր, ուր իրանց վրա ուշադրութիւն էին դարձնում նրա բանաստեղծութիւնները։ Մխիթարեան միաբանութեան մէջ պատահած ներքին երկպառակութեան պատճառով, երիտասարդ բանաստեղծը վերադաձաւ հայ-գրիգորեական եկեղեցու գիրկը։

Մենք կը հեռանայինք մեր նախագծված շրջանից, եթէ որ չը խօսէինք վարդապետ բանաստեղծի գործունէութեան մասին ազգային եկեղեցու կառավարութեան մէջ։ Նրա մասնակցութիւնը Փարիզի և Թէոդոսիայի հոգևոր դպրոցների հիմնելու մէջ, նրա ճառերը ազգային ժողովում և մանաւանդ նրա գրականական գործունէութիւնը եւրոպական նշանակութիւն տուեցին նրան։ Նա եպիսկոպոսական աստիճանի համար էր նշանակված, բայց նրա ձեռնադրութիւնը յետաձգված էր մինչև Գէորգ IV-ի պատրիարքական աթոռ բարձրանալը որը իր Ռուսաստան ճանապարհորդելու ժամանակ, վերցրեց նրան իր հետ, որպէս ուղեցոյց և գլխաւոր քարտուղար։ Նշանաւոր ծառայութիւնները որ նա արաւ նորին Վեհափառութեան կաթողիկոսին Պետերբուրգում և Մոսկվայում, ուր նա ընդունվեցաւ բարձր արիստոկրատիական շրջաններում, յաղթեցին Գէորգ IV-ի սիրելիների թշնամութիւնը, որը եպիսկոպոս ձեռնադրեց նրան 1867—1868 թուին։ Էջմիածնից Նարբէյ եպիսկոպոսը գնաց Եւրոպա ճանապարհորդելու։ Փարիզում մենք պատիւ ունեցանք ներկայանալու նրան և կարողացանք անձամբ տեսնել եպիսկոպոսի գեղեցիկ յատկութիւնները։

(Կը շարունակվի)

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

30 մայիսի

Պատերազմ սկսելու օրից ամեն բան սկսեց փոխվել։ Բայազէթի, Աւաչկերտի հայերը աղքատացան, նրանց կարողութիւնը յափշտակվեց, տները քարուքանդ արին, կատաղի քուրդը իր սուրը ներկեց հայ մանուկի անմեղ արիւնով. հարիւրաւոր կանայք և օրիորդներ ով գիտէ մինչև այսօր էլ որ բռնակալի գաղանաբարոյ գիրկն են յաղեցնում։ Իսկ որպիսի փոփոխութեան ենթարկվեց պատերազմի բեմի մօտ գտնվող ռուսահպատակ հայը։ այստեղ բոլորովին հակառակ երևոյթն է տեսնվում, այստեղ հանգամանքները միջոց տուեցին հային հարստանալ։ Երկու տարի առաջ չը ծախվող ապրանքը այսօր սարսափելի գին ունի, հարիւրանոց թղթադրամները մշակների ձեռքին էլ են երևում, հարիւր ռուբլ դրամագլուխ ունեցողը այսօր հազարներով է խօսում։ Ահա հանգամանքի բերմունքը, մի տեղ մինը աղքատացաւ, նրա թշուառութիւնը մի աղետալի նկարագիր ունի, մի այլ տեղ միւսի վրա հակառակ երևոյթն է նշմարվում։ Բայց ինչպէս օգնեց հարստացած հայը իր տառապեալ հայրենակցին, որ ամեն ինչ կորցրած դէպի նա դիմեց։ Ուրիշ քաղաքացիներին մեղադրել այնքան ես իրաւունք չեմ համարում. նրանք հեռուից լսում էին այդ թշուառների անունը, սակայն նրանց տուած նուէրը երևանցիներից պակաս չէ, երևանցիների աչքի առաջ դեռ ես բաց է այն բեմը որի վրայից տեսնվում է գաղթականի պատկերը իր բոլոր գոյներով. այլ է հեռուից լսել, այլ է իրողութիւնը աչքով տեսնել։ Մենք ասացինք հայը հարստացաւ, նրա նիւթական դրութիւնը կերպարանափոխվեց, փորձեցէք նրա մօտ գնալ, առաջարկեցէք մի լրագիր ստանալ, հասկացրէք նրան ուսման կարևորութիւնը, խնդրեցէք նրանից մի որ և իցէ նիւթական նպաստ այս ինչ նորաբաց օրիորդաց դպրոցին, կամ այն ինչ որբ երեխային, թող այդ դիմող անձը որքան կուզէ մի պատկառելի պարոն լինի, տեսուչ կամ մի պատուաւոր քաղաքացի, բայց մեր Օհանէս աղէն այսպիսի հանգամանքներում շատ հմուտ է վարվում, նա այնպէս է լաց լինում, որ քիչ է մնում մի քանի կոպէկ դրպանից հանես և տաս նրան։ Ինձ քանի քանի անգամ պատահած է տեսնել բարեգործական նպատակների համար ստորագրութեան թերթեր, դրանց մէջ խոշոր թուանշանները միշտ պատկանելիս են եղել մեր մանուկ վաճառականութեանը. իսկ վերոյիշեալ Օհանէս աղաները նոյն սառուցեալ մարմիններն են որպէս էին շատ տարիներ առաջ։ Կան մի քանի բացառութիւններ, մեր խօսքը վերջիններին չէ վերաբերում։ Մի փոքր վերևում ասացինք որ ամեն բան փոփոխութեան ենթարկվեց, բայց զարմանալի է որ մեր հին սերունդը իր հին զգեստը չը փոխեց, հնութեան կնիքը դեռ այսօր էլ անխախտ դրոշմված է նրա վրա, զգենք թէ հայը հեռու է պահում իրան մասնակցելուց ամեն մի օգտաւէտ ձեռնարկութեան, նա այդ մտածում է որովհետև ձեռնտու չէ իր քսակին, բայց միթէ նա չէ մտածում որ տկարին օգնելը, մերկին հագցնելը, ծարաւին ջուր տալը այդ առաքինութիւն է. այն զէնքը որի առաջ բացվում են յաւիտենական կեանքի դռները։ Բայց պէտք է ասած որ հայն այստեղ էլ իր հաշին ունի. նա արքայութիւնն էլ է կամենում ձրի ձեռք բերել, յաճախ, յաճախ եկեղեցի գնալով, բարձր ձայնով աղօթելով։ Քահանան սեղանի առաջ մաղթանք կատարելիս, մի հաստափոր աղայ քսան քայլ նրանից հեռու կանգնած յուշարարի դեր է կատարում, նա քահանայից աւելի բարձր է գոռում «Լուր ձայնից մերոց», այդ ապացոյց է որ պարոնը ջերմեռանդ քրիստոնեայ է, ով ունի ամանաթ (աւանդ) թող բերի նրան պահ տայ։ Որչափ ուրախ կը լինէինք եթէ հայի բարոյական և կրթողական կողմերն էլ մի փոքր զարգանային, որպէս զարգացաւ նրա նիւթականը. բայց դրա համար պէտք է տարիներով մաշվել շկոլայի նստարանի վրա և ոչ թէ դուքանչութիւն անել։ Մեր հայը մի փոքր հարստանալու պէս, նա ինչպէս ասում են, իր չապկի մէջ չէ մնում. իր ազգական շորերը եւրոպականի է փոխում, եթէ մի քանի ամիս մի որ և իցէ պօլկում դուքանչիկութիւն է արել, նա այսօր քաղաքագէտ էլ է դարձել. լրագիր ասած բանը նա չը գիտէ ինչ է, բայց գիտէ դատել և վճռել քաղաքական հարցեր։ Ահա այդ մարդը որ մի քանի ամիս առաջ միս էր մորթում կամ բերանով մի տիկ փչում, ուրցնում, որպէս զի նրա մէջ գտնված արաղի վերջին կաթիլներն էլ քամի, այդ մարդը այսօր աղա է դարձել և շատերի առաջ նա մեծ նշանակութիւն և պատիւ ունի, վասն զի նա մի մասնաւոր գումարի տէր եղաւ։ Բայց պատերազմը բացի այստեղերի հայերին նիւթապէս օգնելուց, նա և մի այլ օգուտ ունեցաւ։ Հայերը կամաց կամաց հետաքրքրվեցան քաղաքական լուրերով. Հերիք է մի լրագրի կտոր ձեռքդ առնես, իսկոյն չորս կողմդ կը շարվեն անց ու դարձ անողները, և կը սկսեն ուշադրութեամբ լսել։ Դրանց մէջ գուցէ աչքի կընկնեն այնպիսի հարուստ անհատներ, որոնց շատ անգամ առաջարկուել է լրագիր ստանալ, բայց ինչին է պէտք, քանի որ իր դրացին, որը կարողութենով գուցէ իրանից շատ ստոր, ստանում է լրագիրը և ինքը մուֆթայ չահվում նրանից։

Ա. Իր.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 5 յունիսի

Կարդալով «Մշակի» 63 և 64 համարներում հրատարակված «Արարատեան ընկ.» Վանի գիշերօթիկ վարժարանին նուիրատուութիւններ տալուն հրաւիրող յօդուածները և քաջ ծանօթ լինելով յիշեալ ընկերութեան բարձր նպատակի հետ — Հայաստանում ձրիապէս ուսում ծաւալելը — ես մեծ պարտք համարեցի, որ իմ աչխատութեամբ ես մի որպիսի և իցէ գումար ստեղծել յօգուտ այդ ընկերութեան յիշեալ վարժարանի։ Նպատակիս հասնելու համար, ես պատրաստեցի թերթեր ծանօթներիս ստորագրել տալու և մի քանի ծանօթ ուսանողների մէջ բաժանելու — իրանց ազգականներից և բարեկամներից նուիրատուութիւններ ժողովելու համար։ Բարեբաղդաբար ինձ այդ աջողվեցաւ։ Ծանօթներս հայրենասիրութեամբ տալիս էին նուիրատուութիւններ, իսկ ուսանողները ուրախութեամբ վերցնում էին թերթերս ժողովելու։ — Ուսանողներից իւրաքանչիւրին ասած էր՝ որ նրանցից ով որ ցանկանայ, իրաւունք ունէ ժողովելուց զկնի ուղղակի յանձնի իր ժողոված գումարը «Մշակի» պ. խմբագրին։ Բոլոր ժողովածս մինչև հիմա վերոյիշեալ ուսանողներիս աշխատութեամբ 190 ր. 6 կոպէկ է, որից ձեզ ուղարկված է ուս. Սարաջեանից և Թումանեանից իրանց ժողովածը 108 ր. 6 կ., իսկ մնացածը, ինձ մօտ գտնված գումարը. 81 ր. 47 կոպէկ է, որը յանձնում եմ ձեզ, պ. խմբագիր, խնդրեմ հաստատեք ուր որ հարկն է։ — Պ. Զ-ից 10 ռուբլ. Նինա Միրզոյեան 3 ր., Հայ ոմն 2 ր., Թալալ Ղորղանեան 3 ր., Ն. Մ. — 1 ր., Ս. Մ. — 1 ր., Հ. Բաղուրեան 1 ր., Ա. Բաբեան 50 կոպէկ, Օրիորդ Հայկուհի Բաբեան 50 կ., Խ. Քէշիշեանց 50 կ., Սուքիասեանց 50 կ., Նաղարեանց 50 կ., Փիրադեան 50 կ., Օհանէս Քօչարեանց 1 ռուբլ, Լ. Աբամէլիքեան 1 ր., Պ. Բահատուրեան 1 ր., Բարսեղ Եղիազարեանց 50 կոպէկ, Ց. Գարեգէլեանց 50 կ., Ց. Լօմինով-Գրիգոլեան 50 կ., Գր. Մակայեան 30 կ., Ն. Բաղդասարեանց 30 կ., Ց. Քաղարեանց 20 կ., Ց. Արղութեան 20 կ., Ի. Մանթաշեանց 20 կ., Գ. Տ. 20 կ., Ոմն 10 կ., Սերգէյ Տէր-Գրիգորեանց 2 գիրք։ — Ընդամենը 30 ր. և 2 գիրք։ — Ուս. Մէլիքեանի թերթից. — Ռոտինեանց 1 ռուբլ, Մ. Մէլիքեան 1 ր., Մէլիքեան 1 ր., Միրիմանեան 1 ր., Խոսրովով 1 ր., Ալէքսանդր Ռոտինեանց 1 ր., Սունդուկեանց 1 ր., Եկատերինէ Միրիմանեան 1 ր., Բայսողլեանց 1 ր., Կատարինէ Եւանգուլեան 1 ր., Շահդինարեանց 1 ր., Մ. Մէլիքեանց 1 ր., Սոֆիո Մէլիքեանց 1 ր., Դաւիթ Ռոտինեանց 1 ր., Մարիամ Ջանջուղազեանց 1 ր., Մամիկոնեանց 1 ր.. — Ընդամենը 16 ռուբլ։ — Ուս. Խատամանեանի թերթից. — Գ. Ազիեանց 1 ռուբլ, N. N. 1 ր., Ա. Գ. Ստեփաննոսեան 1 ր., Ստեփան Իշդբաչեան 1 ր., Ալէքսանդր Ակոպով 1 ր., Գրիգոր Տիրաքեանց 1 ր., Միքայէլ Տէր-Նիկողոսեան 50 կոպէկ. Մ. Հախնազարեանց 50 կ. Արշակ Տէր-Ասատուրեան 50 կ., Ալէքսանդր Զախարիչ

Ռամ. 50 կ., Կոնստանդին 40 կ., Մարիամ Մալումեանց 40 կ., Դիոնն Ջումաղեանց 40 կ., Խոսրով Տէր-Մոսէսեանց 40 կ., Աւէտիք Տէր-Ստեփանեանց 30 կ., Եփրէմ Մէլիքսէթբէգեանց 30 կ., Գր. Ստեփանեան 30 կ., Սերգէյ Աւագեանց 30 կ., Աբէլ Ամիրաղեանց 25 կ., Տէր-Գրիգորեանց 20 կ., Ս. Պետրոսեանց 20 կ., Գրիգոր Յովհաննեանց 50 կ., Մ. Դէդուկեանց 20 կ., Անյայտ 20 կ., Անտօնով 20 կ., Քարանթարեան 20 կ., Ռաղեսնով 20 կ., Տէր-Սիմոնեանց 20 կ., Բաղինեանց Ս. 20 կ., Ս. Բաղուսեանց 20 կ., Գր. Մրեմզ. 20 կ., Մամիկոնեան 20 կ., Յ. Եարալով 20 կ., Ա. Ադամեանց 20 կ., Տ. Տէր-Նիկողոսեան 20 կ., Գուրգէնով 20 կ., Կ. Գաբրիէլեան 20 կ., Մի քանիսը 32 կ.։—Ընդամենը 15 ր. 47 կոպէկ։—Ուս. Գ. Մերաղեանի թերթից.—Գրիգոր Տէր-Աւագեանց 2 ռուբլ, պ. Գաբրիէլ 5 ր., Ա. Սեանեան 40 կոպէկ, Տատօ 20 կ., Աղէքսանդր Լազինեան 20 կ., Օհանէս Շալինեանց 20 կ., Դիմիտրի Յիքուրիձա 20 կ.։—Ընդամենը 8 ր. 20 կոպէկ։—Ուս. Շախնազարեանցի թերթից.—Քարտաշեանց 1 ռուբլ, կարապետ Դալմազով 1 ր., Դաւիթ Իլօնցեվ 1 ր., Եղիազարեանց Արտեմ 50 կոպէկ, Ս. Դէմուրով 50 կ., Յ. Դալմազով 50 կ., Յ. Քամսեվ 50 կ., Իվան Մէրգվելով 50 կ., Փէդրօ Փարէմուզեան 40 կ., Եագոր Մրուսանով 30 կ., Միքայէլ Եզեակեանց 30 կ., Գր. Միրիմանով 30 կ.։—Ընդամենը 6 ր. 80 կոպէկ։—Ուս. Կարապետեանցի թերթից.—Եագոր Բակլանեանց 1 ռուբլ, Միքայէլ Շեմեանց 1 ր., Թադէոս Ցուլիմեանց 1 ր., Մկրտիչ Նալբանդեանց 50 կոպէկ, Սահակ Արտաղեանց 50 կ., Կարապետ Փիլիպոսով 50 կ., Ակոբ Գէորգով 50 կ.։—Ընդամենը 5 ռուբլ։

Մնացած է մի քանի ռուբլ ապառիկ։

Մի քանի ընկերներիս, ստանալու եմ թերթեր. Գուցէ ուղղակի ձեզ, պ. Խմբագիր, ուղարկեն։

Ուսանող Արշակ Բաբեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մայիսի 23-ին ճաշից յետոյ այստեղ հեղեղ եկաւ և շատ վնասներ պատճառեց։ Հեղեղը երկու ժամից աւելի տևեց, ջրի տեղ ցեխ էր գալիս։ Ագուլիսի միակ կամուրջը, ճանապարհները և մի քանի այգիներ փչացան հեղեղից»։

—

ՀԱՂԲԱՏ գիւղից մեզ գրում են. «Այստեղ տարածված է Ղզլջա անուանված հիւանդութիւնը։ Ցուն չը կայ, որից այդ հիւանդութիւնը 2 կամ 3 երեխայ զոհ չը լինի տարած։ Գիւղացիք ոչինչ չեն անում հիւանդութեան առաջն առնելու համար։ Միայն Սուրբ Նշանը հանդիսաւոր կերպով դուրս են բերում, թափոր են անում և սպասում են, որ նա օգնէ հիւանդ երեխաներին»...

—

ՆՈՒԻՈՐՑ մեզ գրում են. «Այստեղի բանտում կայ տիֆ հիւանդութիւնը։ Բանտարկեալներից օրը մեռնում են 2 կամ 3 մարդ։ Կաշու գործարանը չինված է քաղաքի կենտրոնում և բաւական վնասում է իր հոտով բնակիչների առողջութեանը։»

—

«Մշակի» համարները այլ ևս չենք ուղարկում մեր բաժանորդներից նրանց, որոնք վճարել են 5 ռուբլ կամ պակաս, իսկ նրանք, որոնք գրվել են տարով և դեռ վճարը չեն հասցրել խմբագրութեանը, կամ վճարել են միայն 7 ռուբլ, չեն ստանայ «Մշակ» յուլիսի մէկից։ Յուլիսի 1-ից չենք ուղարկի մեր լրագրի համարները նոյնպէս այն բաժանորդներին, որոնք գրվել են մինչև յուլիս և չեն յայտնել խմբագրութեանը, որ ցանկանում են ստանալ տարվայ երկրորդ կէսին։ Այսուհետև սառագրողները պէտք է բաժանորդագրենը կանխիկ վճարեն։ Բացառութիւն կանենք միայն այն ժամանակ, երբ կառաջարկէ մեր գործակալներից մէկը։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹՒՐՔԻԱ

Կ. Պոլսից «Standart» լրագրին ուղարկված մի նամակից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները։

«Ալի-Սուավի էֆէնդու կինը որ անգլեացի է, հարցաքնութեան ենթարկվեցաւ։ Ասում է թէ ինքը ոչինչ չը գիտէր սուլթան Համիդի դէմ եղած դաւադրութեան մասին։ Տիկին Ալի-Սուավին դիտաւորութիւն ունէ վերադառնալ Անգլիա։ Հարցաքննող մասնաժողովը կազմված է նախորդ կաբինէտի անդամներից. Մահմուդ Դամատ, Ռէուֆ, Նամիկ և սուլթանի նախկին թիկնապահ Սայիդ փաշաներն էլ մասնակից են այդ ժողովին։ Բուլեիայի բնակիչներից չորս նշանաւոր անձեր, որոնցից երկուսը ուլէմաներ են, բանտարկվեցան իբրև մեղսակից։ Մի քանի դաղթականների այդ դաւաճանութեան մասնակցելը պատճառ դառաւ որ կառավարութիւնը այժմ բոլորովին համակրութիւն չէ ցոյց տալիս դաղթականներին առ հասարակ։

«Բ. Դրան այրվելը մեծ վնասի պատճառ եղած է։ Երբ արդարութեան մինիստրի դրամարկղը (կասսա) բացին, տեսան որ բոլոր արժէթղթերը մոխիր են դարձել։ Սուլթանի ճարտարապետները քննեցին Բ. Դրան աւերակները և յայտնեցին որ ոչինչ բանի չեն դործածվի։ Նորից շինելը շինելու համար երկու և կէս միլիոն ֆրանկ ծախք կը լինի։ Արդարութեան մինիստրը մի մասնաժողով կազմեց քննելու համար այս հրդեհից վնասվողների պահանջները, որովհետև շատերի մուրհակները և արձանագրութիւններ գտնվում են Բ. Դուռը։

«Քանի որ այն դաւադրութիւնը յայտնված է, նախկին սուլթան Մուրադի վրա աւելի հսկողութիւն կը լինի և Տօպ-Կափուի պալատում բանտարկված է։ Մուրադ բոլորովին առողջացած է և շատ հաւանական է որ եթէ դաւաճաններին աջողվեր նրան դուրս հանել իր բանտից և ցոյց տալ ժողովրդին, սուլթան Համիդ գահընկեց կը լիներ։ Նախկին սուլթանը շատ բարեկամներ և կուսակիցներ ունէ որոնք իր գահընկեց լինելուց յետոյ զրկված են իրանց պաշտօններից. այդ անձերը միշտ աշխատում են միջոցներ գտնել որ իրանց էլ աջողվի կործանել իրանց յաջորդներին։ Այնու ամենայնիւ, այս դաւադրութիւնը լաւ հետևանք չի ունենայ Մուրադի համար. մինչև այժմ իշխանութեան տեր եղողները ընդունում էին նրան իբրև իրանց զոհ. այսուհետև կընդունեն նրան իբրև իրանց թշնամի։ Այդ անձերին կառավարական պաշտօններով բարձրանալը կախում ունէ Մուրադի, այդ բանտարկված սուլթանի շղթաների ծանրութենից։ Եթէ յիսուն տարի առաջ լիներ, նրան գահընկեց անելուց յետոյ խեղդած կը լինէին Թիւրքիայի սովորութեան համեմատ. այսօր թոյլատրում են որ ապրի, բայց երկիւղ են ցոյց տալիս թէ այդ կեանքը վտանգաւոր կը լինի իրանց համար։

Հեռագիրը արդէն լուր բերեց թէ մինիստր նախագահ Սադիկ-փաշան հրաժարված և նրան յաջորդած է Մէհմէդ-Ռուշդի-փաշան, որի առաջարկութենով սուլթանը վերահաստատել է մեծ վէզիրութեան տիտղոսը։ Այս լուրը մեծ նշանակութիւն ունի. որովհետև, ինչպէս յայտնի է, Ռուշդի-փաշան հակառակորդ էր օսմանեան սահմանադրութեան և իսկ իր հակառակութեան համար էր որ մեծ վէզիրութեան պաշտօնից հրաժարվեցաւ և իրան յաջորդեց Միդհաթ-փաշան, երբ օսմանեան սահմանադրութիւնը դրատարակվեցաւ 1876 թվի դեկտեմբերի 23-ին։ Սուլթանը այս անգամ գրված խատի-հիւմայունի մէջ հրաւիրում է մեծ վէզիր Ռուշդի-փաշային որ գործադրի սահմանադրական վերանորոգութիւնները։ Այդ պատուէրը նորընտիր մեծ վէզիրի համար աւելորդ չի իրևի։ Սուլթանը խատի-հիւմայունի մէջ ասում է թէ հարկաւոր է համարած մեծ վէզիրութեան պաշտօն տալ Ռուշդի-փաշային, կայսերական թագի մինչև այժմ ունեցած վարկը և սեփական արտօնութիւնները պահպանելու և հասարակաց հանգստութիւնը և վստահութիւնը ապահովացնելու համար։

### ԻՏԱԼԻԱ

«Italie» լրագիրը հրատարակում է պապի հիւանդութեան վերաբերութեամբ հետևեալը։ «Այս վերջին օրերում շատ չափազանց լուրեր են տարածվել Լևոն XIII-ի առողջութեան մասին։ Ինչպէս արդէն ասել ենք, պապը նեղվում է նեբքին աղիքների հիւանդութենից. այդ հիւանդութիւնը ամարային շոգ ժամանակ աւելի սաստկանում է։ Երբ պապը բնակվում էր Պէրուզում, ուր օդը իրան յարմար էր, այնչափ սաստիկ ցաւ չէր զգում։ Քամբաղդապէս, Վատիկանի օդը վնասում է պապին և իր սովորական տկարութիւնը ծանրանում է։ Երբ կոնկլավի վերջին քուէարկութեան հետևանքը յայտնվելով, կարդինալ Պէկկին պապ ընտրվեցաւ, նրա եղբայրը Դոն Ջիուսէփփէ Պէկկին ասաւ իրան «Սիրելի եղբայրս, ձեր ընտրութեան իմ վրա արած տպաւորութիւնն այն է որ դուք կենդանի կը թաղվիք գերեզմանի մէջ։» Գողգոթան կելնեմ, պատասխանեց կարդինալ Պէկկին որ յետոյ եղաւ Լևոն XIII.

«Պապը առաւօտ վեր է կենում 7 ժամին և 7 ժամ և կէսին դահաւորակով իջնում է պարտէզները և Պիոս IV-ի շինած տաճարի մէջ պատարագ անելուց յետոյ նախաճաշում է։ Յետոյ մի քիչ ժամանակ պտրտում է շուաքի մէջ, իր մտերիմներից շրջապատված, և կամաց կամաց վեր ելնելով գնում է իր բնակարանը։ Բնակարանից պարտէզ իջած ժամանակ միայն գործածում է գահաւորակը։ Առաւօտեան զով օդը նեղացնում է նրան։»

### ԱՒՍՏՐԻԱ

Արևելեան հարցի վերաբերութեամբ կոմս Անդրաշիի արած յայտարարութիւնները ունգարական և աւստրիական պատգամաւորների ժողովներում բացատրում են թէ Աւստրո-Ունգարիան ի՞նչպէս կը վարվի կոնգրէսում։ Մայիսի 29-ին, աւստրիական պատգամաւորների ժողովում, կոմս Անդրաշի ասաց թէ Աւստրիան կամենում է որ մի այնպիսի խաղաղութիւն հաստատվի որ նոր խառնակութիւնների սերմեր չունենայ իր մէջ. բոլգարական սահմանների ընդարձակվելը իրաւացի անհանգստութիւններ է պատճառում. ռուսաց զօրքերը երթևեկի համար ազատ ճանապարհ ունենալով Բուլգարիայում, նրա մէկ մասը և Բոլգարիան գրաւելը երկու տարվայ պայմանաժամով, դիպչում է աւստրիական շահերին։ Կոմս Անդրաշին յիշել է նաև հարևան փոքրիկ տէրութիւնների սահմանները որոշելու հարցը. այնու ամենայնիւ, իրան բոլորովին հակառակ չէ ցոյց տալ Սերբիայի և Չերնոգորիայի հողերի որ և իցէ կերպով ընդարձակվելուն։ Աւստրո-Ունգարական շահերը, ասել է կոմս Անդրաշի, կը ներկայացվեն մեծ պետութիւններին և Ռուսաստանին, և մեր կառավարութիւնը նրանց կը պաշտպանի կոնգրէսում անկեղծ և համարձակ կերպով։

Մայիսի 30-ին, աւստրիական պատգամաւորների ժողովում պ. Աշերնտաուն հարցրեց կոմս Անդրաշուն թէ յունիսի 11-ին (մայիս 30) կոնգրէսի հաւաքվելը հաստատ որոշված է և թէ ինքն ունէ՞ տեղեկութիւն Անգլիայի և Ռուսաստանի մէջ եղած վերջին բանակցութիւնների աջողվելու մասին։ Կոմս Անդրաշի պատասխանեց թէ Գերմանիան որ միջնորդի դեր կատարած է մինչև որ ուղղակի բանակցութիւններով համաձայնութիւն կայացած է Ռուսաստանի մէջ, առաջին անգամ Վիէննային դիմած և հարցրած է թէ հարկաւոր է կոնգրէսի հաւաքվելը և թէ երբ պէտք է հաւաքվել։ Ինքն կոմս Անդրաշի պատասխանած է թէ յունիսի 11-ից (մայիսի 30) սկսած կարելի է երբ կամենայ։ Այս պատասխանը հաղորդված է այլ պետութիւններին։ Կոնգրէսի ժողովը բացվելու համար որոշ մի օր վճռված չէ. բայց անտարակուսելի է որ շուտով կըսկսվի։ Ինքն տեղեկութիւն չունի թէ անգլո-ռուսական բանակցութիւնները աջողութեամբ վերջացած են թէ ոչ. այնու ամենայնիւ, յոյս ունէ որ Անգլիայի և Ռուսաստանի մէջ այնպիսի համաձայնութիւն կայացած չի լինի որ վնասէ աւստրո-ունգարական շահերին։

Կոմս Անդրաշի խօսելով նոր Բոլգարիայում գտնված զանազան ազգերի հարցի վերաբերութեամբ, ասաց թէ յունական տարրը բացարձակապէս ճնշվում է նոր հաստատված դրութենով։ Այդ հարցի վերաբերեալ խօսքերը շարունակելով, ասաց թէ աւստրո-ունգարական միապետութիւնը հաստատված է իր կեանքի և զարգացման պատմական հիմքի վրա. «վայ որ դիպչում է նրան։» Կոմս Անդրաշին աւելացրեց թէ ինքն անկեղծօրէն յայտնած է ռուսաց կառավարութեան իր տեսութիւնը Սան-Ստէֆանոյի դաշնագրի վերաբերութեամբ։ Շատ պատասխաններ ընդունված են ռուսաց կառավարութենից, այնու ամենայնիւ դեռ ամեն մասերի մէջ համաձայնութիւն կայացած չէ։ Դունայի նաւարկութեան ազատ լինելուն, արևելքում Աւստրիայի վաճառականութեան և հաղորդակցութեան շահերի և Ռումինիայի հարցերը շատ ծանր հարցեր են, 60 միլիոն կրէդիտի մէկ մասի գործածվելը հարկաւոր կը լինի եթէ կոնգրէսը աջողվի անգամ, որովհետև կոնգրէսի որոշումների գործադրութիւնը կարելի է որ դժուարանայ, մանաւանդ Աւստրո-Ունգարիայի սահմանակից փոքրիկ տէրութիւններում։ Արևելքում լինելու նոր կազմակերպութիւնը չի իրագործվի առանց դժուարութիւնների, եթէ մինչև անգամ տէրութիւնները կառարելապէս համաձայնված լինեն։ Աւստրիան գրաւած է Ադա-Կալէ Բ. Դրան հաւանութեամբ և կը պահէ նրան իր իշխանութեան տակ մինչև որ կոնգրէսը որոշէ թէ որին պէտք է պատկանի այդ կղզին։ Բ. Դրան հետ բանակցութիւնները Բոսնիայի դաղթականների վերաբերութեամբ դեռ չեն վերջացել։ Աւստրիան դեռ փոխադարձ առաջարկութիւն չէ ներկայացրած Բոլգարիայի վերաբերութեամբ. այդ մասին իր կարծիքը կը յայտնի, ասած է կոմս Անդրաշին, երբ խաղաղութիւնը հաստատվի։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամէնքից հաղորդում են մայիսի 29-ին թէ անգլիական հիւպատոսը Կրիտ կղզում խորհրդակցութիւն է ունեցել պատերազմական պարագլուխների և ժողովի անդամների հետ։ Իրանց յայտնել է որ Բ. Դուռը կը չնորհի կատարեալ ներողութիւն և կառավարական վերանորոգութիւններ եթէ ապստամբները զինաթափ լինեն։ Ապստամբները խնդրում են միանալ Յունաստանի հետ։ Որ և իցէ դէպքում, պահանջում են որ վերջնական բանակցութիւնների սկսվելուց առաջ զինադադարի պայմաններ կապվեն կրետացիների և Թիւրքերի մէջ։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 6/18 յունիսի։ Այսօր Անգլիական, Աւստրիական լիազօր հաւատարմատարները և կոմս Շուվալով խորհրդակցութիւն ունէին, որ, ինչպէս երևում է, վերաբերվում է Բոլգարիային։ Այս ընդհանուր սկզբնական խորհրդակցութեանը մեծ նշանակութիւն են տալիս։ Հետևեալ նիստը, որ կը նուիրվի Բոլգարական գործի շարունակութեանը, նշանակված է էգուց 2 ժամին։

Дозволено Цензурою 7 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ